ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> 02 2013թ. N: 40-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանը խախտելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի <<Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին>> թիվ 1477-Ն որոշման 1-ին կետի պահանջները, 2011-2012 թվականների ընթացքում առանց վարձակալության պայմանագրեր կնքելու Ախուրյան համայնքի սեփականությունը հանդիսացող 147.25 հա արոտները տրամադրել է քաղաքացիների օգտագործմանը, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 56^{1}-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) կողմից 2012 թվականի հոկտեմբերի 14-ին կազմված <<Հողերի օգտագործման և պահպանման խախտումների>> թիվ 28 ակտը, Տեսչության պետի 2012 թվականի դեկտեմբերի 7-ի Հ.8 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244^{9}-րդ, 281-283-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի ղեկավար Արծրունի Իգիթյանի նկատմամբ նշանակել հարյուր հազար դրամ տուգանք, որը ենթակա է մուծման 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջե հ/հ 900005242954:
2. Որոշման պատճենն երեք օրվա ընթացքում ուղարկել Արծրունի Իգիթյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ա. ԳԻԶԻՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է